



ՎԱՐՍԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի հայցորդ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՆԱԽԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԵՎ ՀԵՏՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացումը պայմանավորված էր արտաքին և ներքին մի շարք լուրջ ազդակներով: Դրանք սկսեցին գործել միասնաբար, և փոխազդեցության հետևանքով առաջացան ֆինանսատնտեսական ճգնաժամի լուրջ պատճառներ: Այսպես՝

- համաշխարհային շուկայում պղնձի պահանջարկի և գների անկումից բխող ՀՀ հանքարդյունաբերական արտադրանքի արտադրության և արտահանման ծավալների կրճատումը, որի հետևանքով կրճատվեցին նաև պետական բյուջեի եկամուտները,
- սփյուռքից և արտագնա աշխատողների եկամուտներից մասնավոր տրանսֆերտների ներհոսքի կրճատումով պայմանավորված՝ տնային տնտեսությունների սպառողական վարքագծի փոփոխությունը,
- անշարժ գույքի նկատմամբ արտաքին պահանջարկի նվազման պատճառով այս ոլորտում ներդրումների, արտաքին կապիտալի ներհոսքի կրճատման, ներդրումային ծրագրերի հետաձգման հետևանքով շինարարության ճյուղի զգալի անկումը,
- դոլարային մուտքերի կրճատման հետևանքով ՀՀ-ում դոլարի նկատմամբ պահանջարկի մեծացումը և, դրանով պայմանավորված, ազգային դրամի արժեզրկումը,
- միջազգային առևտրային պայմանների և տնտեսական հարաբերությունների փոփոխությամբ, տնտեսության բազմազանեցման ցածր մակարդակով պայմանավորված՝ արտահանման ծավալների կրճատումը:

Հայաստանի Հանրապետության տնտեսությունն ամենից առաջ կրեց հանքահումքային ապրանքների միջազգային գների անկման ազդեցությունը, որը կասեցրեց այդ ոլորտի զարգացումը: 2008 թ. կրճատվեց հանքահումքային ապրանքների պահանջարկը, խիստ նվազեցին բարձր գնով արտահանվող պղնձի խտանյութի գները, և ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում արձանագրվեց տնտեսական ճգնաժամ: Նշենք, որ Լոնդոնի միջազգային մետաղների բորսայում 1 տ պղնձի գինը 2002 թ. 1400 ԱՄՆ դոլար էր, 2004 թ.՝ 3000, 2005 թ.՝ 4000, 2007 թ.՝ 8008¹ դոլար: 2008 թ. հուլիսին 1 տոննա պղնձի խտանյութի գինը հասավ 8414 ԱՄՆ դոլարի², սակայն նոյեմբերին կտրուկ նվազեց՝ դառնալով 3717 ԱՄՆ դոլար: Պղնձի պահանջարկի կտրուկ նվազումն ու գնի անկումը սահմանափակեցին Հայաստանից արտահանվող հանքարդյունաբերական ապրանքներից ստացվող եկամուտները: Ճգնաժամի ազդեցությունը մեծ էր հատկապես ՀՀ արդյունաբերության ոլորտի վրա, որտեղ զգալի բաժին էր կազմում հանքագործական արդյունաբերությունը (աղյուսակ 1), որի բաժինը մեծ էր արտահանման մեջ: Ուստի տնտեսական ճգնաժամի ազդեցությունը արդյունաբերության ոլորտի վրա հիմնականում ուսումնասիրվել է հանքագործական արդյունաբերության օրինակով:

Աղյուսակ 1

Հանքագործական արդյունաբերության արտադրանքի բաժինը ՀՀ արդյունաբերության ընդհանուր ծավալում (2006-2011 թթ.)³

Ցուցանիշներ	Տարիներ					
	2006	2007	2008	2009	2010	2011
Ամբողջ արդյունաբերության արտադրանքի ծավալը (մլրդ դրամ)	644.9	716.5	739.3	669.4	824.4	999.0
Հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալը (մլրդ դրամ)	113.5	113.8	93.3	88.6	145.5	170.2
այդ թվում՝						
Մետաղական հանքաքարի արդյունահանում (մլրդ դրամ)	109.3	106.9	85.3	84.2	140.4	165.6
Հանքագործական արդյունաբերության արտադրանքի բաժինը ամբողջ արդյուն. արտադրանքի մեջ (%)	17.6	15.9	12.6	13.2	17.6	17.0
այդ թվում՝						
Մետաղական հանքաքարի արդյունահանումը հանքագործ. արդյունաբերական արտադրանքի մեջ (%)	96.3	93.9	91.5	95.0	96.5	97.3
Մետաղական հանքաքարի արդյունահանումը ամբողջ արդյուն. մեջ (%)	16.9	14.9	12.3	12.6	17.0	16.6

Այսպես՝ հանքագործական արդյունաբերության արտադրանքը 2006 թ. կազմել է արդյունաբերական արտադրանքի գրեթե 17.6%-ը, իսկ 2009 թ.

¹ Տես Ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում (Մ.Մելքունյանի և Վ.Հակոբյանի ընդհանուր ղեկավարությամբ և խմբագրությամբ), Եր., «Զանգակ – 97», 2008, էջ 177:

² Տես Վ. Հարությունյան, Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ. պատճառներ, հակաճգնաժամային միջոցառումներ և դասեր, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, էջ 25:

³ Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2010, Եր., 2010, էջ 263, Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2012, Եր., 2012, էջ 253:

13.2%-ը: Համապատասխանաբար նվազել են նաև մետաղական հանքաքարի արդյունահանման ծավալները. եթե 2006 թ. մետաղական հանքաքարի արդյունահանման բաժինը ամբողջ արդյունաբերության մեջ 16.9% էր, իսկ հանքագործական արդյունաբերության մեջ՝ 96.3%, ապա 2009 թ. համապատասխանաբար կազմել է 12.60% և 95.0%: Աղյուսակի տվյալներից երևում է, որ 2011 թ., 2009 թ. համեմատությամբ, ամբողջ արդյունաբերական արտադրանքի ծավալը ավելացել է 49.2%-ով, հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալը՝ 92.1%-ով, իսկ մետաղական հանքաքարի արդյունահանման ծավալը՝ 96.7%-ով: Ըստ այդմ՝ ավելացել են ինչպես արդյունաբերական արտադրանքի, այնպես էլ հանքագործական արդյունաբերության արտադրանքի և մետաղական հանքաքարի արտահանման ծավալները: Այս տվյալները վկայում են, որ 2011 թ. արդեն ինչպես ամբողջ արդյունաբերությունը, այնպես էլ հանքագործության բնագավառը դուրս են եկել խոր տնտեսական ճգնաժամից:

Աղյուսակ 2

ՀՀ հանքագործական արդյունաբերության արտադրանքի արտահանման մեջ մետաղական հանքաքարի արտահանման տեսակարար կշռի փոփոխությունը 2006-2011 թթ.⁴

Ցուցանիշներ	Արտահանումն ըստ տարիների					
	2006	2007	2008	2009	2010	2011
Հանքագործական արդյունաբերության արտադրանքի արտահանումը (%)	100	100	100	100	100	100
<i>այդ թվում՝</i>						
Մետաղական հանքաքարի արտահանումը (%)	28.4	33.8	32.7	32.4	31.9	27.2
սև մետաղներ	17.0	21.1	20.3	13.1	12.5	10.1
իրեր սև մետաղներից	0.2	0.4	0.2	0.3	0.3	0.1
պղինձ և իրեր դրանից	7.8	6.5	6.5	9.2	9.6	9.0
ալյումին և իրեր դրանից	0.8	3.7	3.8	8.5	8.0	6.8
այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, իրեր դրանից	2.6	2.1	1.9	1.3	1.5	1.2

Աղյուսակ 2-ի տվյալների ուսումնասիրությունից պարզվում է, որ պղնձի և ալյումինի արտահանման տեսակարար կշիռները 2009 թ., 2007-ի համեմատությամբ, մեծացել են, սակայն իրականում պղնձի արտահանման ծավալներն ավելացել են ավելի փոքր չափով, քան ալյումինինը: Դրանց տեսակարար կշիռների աճը հետևանք է այն բանի, որ հանրապետության արտադրանքի արտահանման ծավալներն այդ ընթացքում ավելի արագ են կրճատվել, քան պղնձինը:

Այսպես՝ եթե 2007 թ. Հայաստանի Հանրապետության արտահանման ծավալը կազմել է 1152.3 մլն ԱՄՆ դոլար, ապա 2009 թ. նվազել և կազմել է 710.2 մլն ԱՄՆ դոլար⁵ կամ կրճատվել է 38.4%-ով: Մյուս կողմից՝ եթե 2007 թ. պղնձի և դրանից պատրաստվող իրերի արտահանումը կազմել է 74.7 մլն

⁴ Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2010, էջ 479, Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2012, էջ 465:

⁵ Տես Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2010, Եր., 2010, էջ 454:

դոլար⁶, ապա 2009 թ. այն նվազել է և կազմել 65.3 մլն դոլար՝ կրճատվելով 14.4%-ով: Այլումինի արտահանումը 2007 թ. կազմել է 42.6 մլն դոլար, իսկ 2009 թ.՝ 60.3 մլն դոլար, այսինքն՝ ավելացել է 41.5%-ով: Ինչպես պղնձի, այնպես էլ ալյումինի և դրանից պատրաստվող իրերի արտադրության ծավալի աճը հանգեցրել է նաև արտահանման ծավալի աճին: Այսպես՝ պղնձի արտահանման ծավալը 2010 թ., 2009 թ. համեմատությամբ, ավելացել է 34.4 մլն դոլարով⁷ կամ 52.7%-ով, իսկ ալյումինինը 23 մլն դոլարով կամ 38.1%-ով:

Ջանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատը (ԶՊՄԿ), որ մինչ ձգնաժամը, 3 տարի շարունակ, ՀՀ առաջին խոշոր հարկատուն էր, 2008 թ. ֆինանսական տարվա հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի խոշոր հարկատուների ցանկում գրավեց 4-րդ տեղը՝ պետբյուջե մուտքագրելով 14,4 մլրդ դրամ: 2009 թ. առաջին եռամսյակում արդեն 45-րդն էր՝ 279,6 մլն դրամ մուտքագրմամբ: 2009 թ. ֆինանսական տարվա հաշվարկով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի խոշոր հարկատուների ցանկում ԶՊՄԿ-ն գրավեց 8-րդ տեղը՝ պետբյուջե մուտքագրելով 6.3 մլրդ դրամ: ՀՀ-ում սոցիալ-տնտեսական ուղղվածություն ունեցող առանց այն էլ համեստ պետական ծախսերը կրճատվեցին և բնակչության կենսամակարդակն անկում ապրեց: ՀՀ Կառավարությունը, կարևորելով տնտեսական աճի խթանումը, որոշեց պետական բյուջեի ծախսերի մի մասը կատարել պետական բյուջեի պակասուրդի մեծացման հաշվին՝ վարելով խթանող հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականություն: 2009 թ. սկզբին նախատեսվում էր բյուջեի պակասուրդ ՀՆԱ 1%-ի չափով, սակայն դա մինչև 7.6% բարձրացվեց՝ խթանելով համախառն պահանջարկը, և պետական պարտքը հասցվեց ՀՆԱ 34.3%-ի:

2009 թ. երկրորդ կեսին համաշխարհային շուկայում մետաղների գների աճի և ՀՀ Կառավարության իրականացրած աջակցության ծրագրի շնորհիվ երկրի հանքարդյունաբերությունն աստիճանաբար սկսեց վերականգնվել:

Միջազգային շուկաներում մետաղների խտանյութի գների կտրուկ անկման հետևանքով 2009 թ. ՀՀ պետական բյուջեն, 2008 թ. համեմատությամբ, 98.7 մլրդ դրամով⁸, իսկ միայն ԶՊՄԿ-ի կողմից՝ 8,1 մլրդ դրամով պակաս հավաքագրեց հարկերը, պակասեցին նաև արտադրության հոսքերը:

Այսպիսով՝ համաշխարհային շուկայում պղնձի պահանջարկի անկումը և գների կտրուկ նվազումը, համաշխարհային ՀՆԱ 0.8%-ով⁹ նվազումը, որը պայմանավորված էր աշխարհի շուրջ 89 երկրներում գրանցված տնտեսական անկմամբ, արտաքին մի շարք կապերի փլուզումն ու պայմանավորվածությունների հետաձգումը 2009 թ. ՀՀ-ում հանգեցրին 14.1% տնտեսական անկման: Հանրապետությունում անկում ապրեցին արտադրության, ներդրումների, արտահանման ծավալները:

2009 թ. 1-ին եռամսյակում ՀՀ տնտեսությունը կրեց ձգնաժամի երկրորդ հարվածը՝ պայմանավորված սփյուռքից ազգաբնակչությանն ուղարկվող մասնավոր տրանսֆերտների ծավալի աննախադեպ կրճատմամբ: Դա ազդեց բնակչության որոշակի մասի դրամական եկամուտների վրա, հետևաբար՝ պահանջարկի վրա և նվազեցրեց գործարար ակտիվությունը: Այսպես՝ 2000 թ. մինչև 2008 թ. զուտ մասնավոր տրանսֆերտներն անընդհատ աճի

⁶ Տես նույն տեղը, էջ 467:

⁷ Տես նույն տեղը, էջ 462:

⁸ Տես ՀՀ ԿԱ ՊԵԿ, Տարեկան հաշվետվություն, 2010, աղյուսակ 1, էջ 7:

⁹ Աղբյուրը՝ <http://www.ereport.ru>

միտում են դրսևորել՝ 85.6 մլն¹⁰ ԱՄՆ դոլարից հասնելով 1062.4 մլն ԱՄՆ դոլարի: 2009 թ. ձգնաժամով պայմանավորված՝ զուտ մասնավոր տրանսֆերտները նվազել են 69%-ով և կազմել 733.2 մլն ԱՄՆ դոլար: 2010 թ. զուտ մասնավոր տրանսֆերտները շարունակել են նվազել՝ կազմելով 477.1 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2011 թ., 2010 թ. համեմատությամբ, մի փոքր աճել են և կազմել 562.7 մլն ԱՄՆ դոլար, որը ցածր է նույնիսկ 2009 թ. մակարդակից: Դա վկայում է այն մասին, որ աշխարհի զարգացած և զարգացման ներուժ ունեցող երկրները դեռևս չեն հաղթահարել ձգնաժամի հետևանքները: Տրանսֆերտների հիմնական աղբյուրը Ռուսաստանն էր, որը, որպես հումքային երկիր, բավական խորությամբ կրում էր ձգնաժամի ազդեցությունը: Տրանսֆերտների կարևոր աղբյուր էին նաև ԱՄՆ-ը, ԱՊՀ երկրներից Ուկրաինան, Ղազախստանը և Եվրոպական երկրները, որոնք ևս գտնվում էին գործարար ակտիվության անկման շրջանում: Ըստ ԱՄՀ փորձագետների գնահատումների՝ ԱՊՀ երկրներ մասնավոր տրանսֆերտների ներհոսքի 10% աճը հանգեցնում է ՀՆԱ 0.3% աճի, ընդ որում, նավթ արտահանող ԱՊՀ երկրների համեմատությամբ, նավթ ներմուծող երկրների ՀՆԱ-ի վրա ազդեցությունը փոքր-ինչ մեծ է՝ 0.4%¹¹:

Տրանսֆերտների աճի տեմպերի կրճատումը հանգեցրել է համախառն տնօրինվող եկամտի կրճատման: Այսպես՝ համախառն տնօրինվող եկամուտը 2008 թ. կազմել է 4060.5 մլրդ դրամ¹², իսկ 2009 թ.՝ ընդամենը 3497.9 մլրդ դրամ կամ նվազել է 13.9%-ով, այսինքն՝ 562.6 մլն դրամով:

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ արդեն 2006 թ. արտերկրից ստացվող մասնավոր ընթացիկ տրանսֆերտների շուրջ 88.3%-ն ուղղվում էր տնային տնտեսությունների՝ սպառման նպատակով կատարվող ծախսերին, 8.7%-ը՝ կրթության վրա կատարվող ծախսերին և միայն փոքր մասը՝ շուրջ 3%-ը, խնայողություններին և ձեռնարկատիրական գործունեությանը, ապա կարող ենք ասել, որ 2009 թ. դրանց կտրուկ նվազումը հանգեցնելու էր ամբողջական պահանջարկի մակարդակի անկման:

Հայաստանում ֆինանսատնտեսական ձգնաժամի առաջացման կարևոր պատճառ էր նաև ՀՀ դրամի արժեզրկումը: Եթե հաշվի առնենք այն փաստը, որ արտաքին շուկաներում, պղնձի գնի նվազմամբ, շինարարության ոլորտի անկմամբ, տրանսֆերտների կրճատմամբ պայմանավորված, նվազեց ՀՀ կապիտալի շարժը (դոլարի ծավալները), ապա, դրա հետևանքով, առաջարկի կրճատումը բարձրացրեց դոլարի նկատմամբ պահանջարկը, և ՀՀ դրամը կանգնեց արժեզրկման շեմին: Արտահանման ծավալների կրճատման և արտաքին առևտրաշրջանառության հաշվեկշռի բացասական մնացորդի մեծացման պատճառով վճարային հաշվեկշռում արձանագրվեց մեծ պակասուրդ, որը պետք է փակվեր կամ ՀՀ ԿԲ միջազգային պահուստների, կամ միջազգային ֆինանսական կառույցներից ստացվող փոխառությունների հաշվին, կամ էլ դրանց միաժամանակյա օգտագործմամբ: ԿԲ-ը դրամի ազատ լողացող փոխարժեքին վերադառնալուց առաջ՝ 2004 թ., միջազգային պահուստներից վաճառեց ոսկին, որպեսզի կարողանար կարգավորել փոխարժեքը:

¹⁰ Տե՛ս <http://www.minfin.am/>, ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (եռամսյակային):

¹¹ Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկ, Ֆինանսական կայունության հաշվետվություն – 2010, 2011 թ., էջ 17:

¹² Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2012, Եր., 2012, էջ 232, աղյուսակ 176:

Այսպիսով՝ ՀՀ տնտեսական ճգնաժամն ընդգրկեց նաև ֆինանսական հատվածը, և ՀՀ բանկային համակարգը կանգնեց անկման վտանգի առջև: Սակայն ՀՀ Կառավարությունը ձեռնարկեց բավական լուրջ միջոցառում, և ԿԲ-ը 03.03.2009 թ. հայտարարեց, որ Հայաստանը փոխարժեքի կարգավորվող լողացող ռեժիմից անցնում է ազատ լողացող փոխարժեքի քաղաքականությանը, քանի որ դա արտաքին հավասարակշռության համար ծառայում է որպես կայունացման մեխանիզմ՝ հատկապես ճգնաժամային իրավիճակներում:

Ինչպես հայտնի է, ազգային արժույթը 2003 թ. մարտից (1 դոլարի դիմաց՝ 589.52 դրամ¹³) սկսեց աստիճանաբար արժևորվել և 2008 թ. հուլիսին կազմեց 300.97 դրամ՝ 1 դոլարի դիմաց: Այդ՝ ամենացածր մակարդակը փոքր տատանումներով (5-6 դր. սահմաններում) պահպանվեց մինչև 2009 թ. մարտ ամիսը, երբ Կառավարության որոշմամբ փոխարժեքը սահմանվեց 367.77 դրամ: Այս կտրուկ փոփոխությունն ազդեց նաև արտահանման և ներմուծման ծավալների վրա: Այսպես՝ եթե 2008 թ. արտահանումը կազմել է 1057.2 մլն ԱՄՆ դոլար, ներմուծումը՝ 4426.1 մլն, ապա 2009 թ., համապատասխանաբար՝ 710.2 և 3321.1 մլն ԱՄՆ դոլար¹⁴:

Դրամի արժեզրկումը ձեռնառու չէր ներմուծողներին, իսկ Հայաստանն այդ ժամանակ կախում ուներ ներմուծումից: Արժեզրկումը խթանում էր արտահանումը, սակայն տնտեսության բազմազանեցման ցածր մակարդակի պայմաններում մենք դարձել էինք տրանսֆերտներով բավարարվող երկիր և ուշադրություն չէինք դարձնում արտահանելի ապրանքներ թողարկող ճյուղերի զարգացմանը, միջազգային շուկայում դրանց մրցունակության բարձրացմանը: ՀՀ-ում արտահանման ծավալներում գերակշռում էր միայն պղնձի խտանյութը:

Դրամի արժեզրկման պայմաններում դժվարանում է արտարժույթային փոխառությունների և վարկերի վերադարձելիությունը, որն ազդում է պետական պարտքի վրա, և պարտքի կայունության ապահովումը դառնում է չափազանց կարևոր (աղյուսակ 3): Ըստ աղյուսակի տվյալների՝ 2003 թ. ՀՀ արտաքին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը նվազման միտում է դրսևորել. կայուն մակարդակից աստիճանաբար իջնելով՝ 2008 թ. հասել է գերազանց մակարդակի՝ 13.5%-ի: Այս ցուցանիշով Հայաստանը 2008 թ., երբ սկսվեց ճգնաժամը, համարվում էր նվազ պարտքի բեռ ունեցող երկիր, իսկ 2009 թ.՝ միջին պարտքային բեռ ունեցող երկիր: Այս հանգամանքը պայմանավորված է ճգնաժամի հետևանքով տնտեսական անկմամբ, բյուջեի պակասուրդի ավելացմամբ և դրամի արժեզրկմամբ:

Արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2002 թվականից շարունակ նվազել է մինչև 2008 թ. ներառյալ, իսկ 2009 թ. կտրուկ ավելացել՝ 2008 թ. 13.5%-ից դառնալով է 34.3%, իսկ 2011 թ. կազմել է 35.2%: Այդ նույն ժամանակաշրջանում փոփոխության գրեթե նույն միտումն է ունեցել նաև ՀՀ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը, քանի որ 2009 թ. զգալիորեն աճել է նաև ՀՀ ներքին պարտքը: ՀՀ արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցել է ՀՀ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության փոփոխությունը: Եթե 2009 թ. ՀՀ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՀ արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազան-

¹³ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2004, Եր., 2004, էջ 504:

¹⁴ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2012, Եր., 2012, էջ 17:

ցել է 4.6 տոկոսային կետով՝ կազմելով 38.9%, ապա 2011 թ. այդ ցուցանիշը հասել է 5.5 տոկոսային կետի և կազմել 40.7%:

Աղյուսակ 3

ՀՀ արտաքին պետական պարտքի շարժընթացը¹⁵

Ցուցանիշներ	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
ՀՀ պետական պարտք (մլն ԱՄՆ դոլար)	7.970.4	1.095.3	1.173.9	1.278.5	1.213.3	1.400.1	1.696.8	1.906.0	3.362.7	3.795.0	4.128.7
այդ թվում՝											
Արտաքին պետական պարտք (մլն ԱՄՆ դոլար)	905.6	1.025.5	1.097.7	1.182.9	1.099.2	1.205.6	1.448.9	1.577.1	2.966.7	3.299.0	3.568.2
ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)	2.118.5	2.376.3	2.807.1	3.576.6	4.900.4	6.384.5	9.206.3	1.662.0	8.648.0	9.260.3	0.138.1
ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ միջին տարեկան փոխարժեք	555.1	573.4	578.8	533.5	457.7	416.0	342.1	306.0	363.3	373.7	372.5
ՀՀ պետական պարտք/ՀՆԱ (%)	45.8	46.1	41.8	35.7	24.8	21.9	18.4	16.3	38.9	41.0	40.7
այդ թվում՝											
Արտաքին պետական պարտք/ՀՆԱ (%)	42.7	43.2	39.1	33.1	22.4	18.9	15.7	13.5	34.3	35.6	35.2

Ֆինանսատնտեսական ճգնաժամը էական ազդեցություն ունեցավ նաև ՀՀ արտափանման և ներմուծման հարաբերակցության վրա՝ ավելացնելով ներմուծման ծավալները, որոնք, իրենց հերթին, լուրջ ազդեցություն ունեցան տնտեսական այնպիսի կարևոր ցուցանիշների վրա, ինչպիսիք են ՀՀ բյուջեի հարկային եկամուտները, անձնական և տնօրինվող եկամուտները: Ըստ այդմ՝ անկում ապրեց բնակչության կենսամակարդակը, վտանգվեց տնտեսական անվտանգությունը:

ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության բնագավառի փոփոխությունների վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 4-ում: Ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները վառ կերպով արտացոլվել են արտաքին առևտրաշրջանառության 2008-2009 թթ. ցուցանիշներում. առևտրաշրջանառության ծավալները կտրուկ աճել են 2007-2008 թթ., սակայն այդ աճը ձեռք է բերվել հիմնականում ներմուծման ծավալների ավելացման հաշվին, որը կտրուկ փոխել է նաև արտափանման ու ներմուծման հարաբերակցությունը:

Եթե 2006 թ. ներմուծումը գերազանցում էր արտափանմանը 2.22 անգամ, ապա 2008 թ. այդ ցուցանիշը 4.19 էր, 2009 թ.՝ 4.68, իսկ 2011 թ.՝ 3.1, որը դրական երևույթ է: Այդ տարիներին կտրուկ ավելացավ նաև զուտ արտա-

¹⁵ Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության պետական պարտքը, Տարեկան հաշվետվություն – 2010, Եր., 2011, էջ 30:

հանման ծավալը՝ բացասական իմաստով: 2009 թ., 2008 թ. համեմատությամբ, արտահանման ծավալները կրճատվել են 48.9%-ով, իսկ ներմուծմանը՝ 33.3%-ով:

Աղյուսակ 4

*ՀՀ արտահանման և ներմուծման հարաբերակցության շարժընթացը
2006-2011 թթ. (%)¹⁶*

Ցուցանիշները	Տարիներ					
	2006	2007	2008	2009	2010	2011
ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)	6.384.5	9.206.3	11.662.0	8.648.0	9.260.3	10.138.1
ՀՀ արտահանում (մլն ԱՄՆ դոլար)	985.1	1152.3	1057.2	710.1	1041.1	1334.3
ՀՀ ներմուծում (մլն ԱՄՆ դոլար)	2191.6	3267.8	4426.1	3321.1	3749.1	4145.3
Զուտ արտահանում (մլն ԱՄՆ դոլար)	-1206.5	-2115.5	-3368.9	-2611.0	-2708.0	-2811.0
ՀՀ արտաքին առևտրաշրջանառություն (մլն ԱՄՆ դոլար)	3176.7	4420.1	5483.3	4031.2	4790.2	5479.6
ՀՀ արտահանման և ներմուծման հարաբերակցություն (%)	44.9	35.3	23.9	21.4	27.8	32.2
ՀՀ արտահանման աճ (%)	101.1	117.1	91.7	67.2	146.6	128.2
ՀՀ ներմուծման աճ (%)	21.6	149.1	135.4	75.0	112.9	110.6
ՀՀ ներմուծման և արտահանման հարաբերակցություն (անգամ)	2.22	2.84	4.19	4.68	3.6	3.1
ՀՀ արտաքին առևտրաշրջանառության աճ (%)	—	139.1	124.1	73.5	118.8	114.4
Զուտ արտահանում/ՀՆԱ	-18.9	-23	-28.9	-30.2	-29.2	-27.7
Արտահանում/ ՀՆԱ	15.4	12.5	9.1	8.2	11.2	13.1
Ներմուծում/ՀՆԱ	34.3	35.5	38.0	38.4	40.5	40.9

Քանի որ արտահանումը նվազել է ավելի մեծ չափով, քան ներմուծումը, նվազել է նաև զուտ արտահանումը, սակայն ավելի փոքր չափով՝ 29.0%-ով: Չնայած ազգային արժույթի արժեզրկմանը, այդ ցուցանիշները պայմանավորված են արտահանվող ապրանքների նկատմամբ համաշխարհային պահանջարկի նվազմամբ և փոխարժեքի ազդեցության դրսևորման ժամանակաշրջանով: 2010-2011 թթ. և՛ արտահանումը, և՛ ներմուծումը ավելացել են, սակայն արտահանման աճի տեմպերը գերազանցել են ներմուծման աճի տեմպերը, որի հետևանքով զուտ արտահանման աճի տեմպերը դանդաղել են: Եթե 2010 թ., 2009 թ. համեմատությամբ, արտահանումն աճել է 46.6%-ով, իսկ ներմուծումը՝ 12.9%-ով, ապա 2011 թ., 2010 թ. համեմատությամբ, այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 28.2% և 10.6%: Արդյուն-

¹⁶ Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2007, Եր., 2007, էջ 225, Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2012, Եր., 2012, էջ 17:

քում՝ զուտ արտահանումը 2010 թ., 2009 թ. համեմատությամբ, աճել է 3.7%-ով, իսկ 2011 թ., 2010 թ. համեմատությամբ՝ 3.8%-ով: Վերոհիշյալ փոփոխությունների հետևանքով արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունը 2006-2009 թթ. աստիճանաբար նվազել է, իսկ 2010-2011 թթ.՝ աճել, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ արտահանման աճը այդ տարիներին գերազանցել է ներմուծման աճը: Ղրան հակառակ՝ ներմուծում/ՀՆԱ հարաբերակցությունը շարունակաբար աճել է և 2006 թ. 34.3%-ից 2011 թ. հասել է 40.9%-ի: Արտահանման աճն արդյունք է նաև տնտեսության բազմազանեցմանն ուղղված միջոցառումների իրականացման:

Արտաքին և ներքին գործոններով պայմանավորված՝ ՀՀ-ում ձգնաժամ ծնող պատճառներն էականորեն ազդեցին մակրոտնտեսական իրավիճակի վրա՝ փոփոխության ենթարկելով հիմնական ցուցանիշները, ազդելով ամբողջական պահանջարկի վրա: Ֆինանսատնտեսական ձգնաժամի հետևանքով ՀՆԱ ծավալը կրճատվել է (աղյուսակ 5):

Աղյուսակ 5

ՀՀ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները 2002-2011 թթ.¹⁷

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	Տարիներ									
	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	1362,5	1624,6	1907,9	2242,9	2656,2	3149,3	3568,2	3141,7	3460,2	3776,4
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (հազ. դրամ)	424,2	505,9	593,6	697,1	824,6	976,1	1103,3	968,5	1062,7	1155,4
ՀՆԱ ինդեքս-դեֆլյատոր (%) (նախորդ տարվա նկատմամբ)	100,7	104,6	106,3	103,2	104,6	104,2	105,9	102,6	107,8	104,2
Ինֆլացիա (%)	102,0	108,6	102,0	-99,8	105,2	106,6	105,2	106,5	109,4	104,7
Գործազրկության պաշտոնական միջին տարեկան մակարդակ (%)	10,8	10,1	9,6	8,2	7,5	7,0	6,3	7,0	7,0	18,4*
Իրական ՀՆԱ աճ (%)	13,2	14,0	10,5	13,9	13,2	13,7	6,9	-14,1	2,2	4,7
Համախառն խնայողություններ (մլրդ դրամ)	108,9	218,1	285,2	613,2	847,1	991,5	1141,7	553,9	507,5	

* Ցուցանիշը հաշվարկված է նոր մեթոդաբանությամբ

¹⁷ Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2007, Եր., 2007, էջ 207, 395, 212, Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2012, Եր., 2012, էջ 227, 416, 233, <http://www.minfin.am/>, ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (եռամսյակային), <http://www.minfin.am/>, ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (ամսական):

Ի դեպ, անվանական ՀՆԱ-ն, մինչև 2008 թ. ներառյալ, ապահովել է կայուն աճ, իսկ 2009 թ. կազմել է 2008 թ. անվանական ՀՆԱ-ի 88.05%-ը կամ 3141.7 մլրդ դրամ: 2010-2011 թթ. անվանական ՀՆԱ-ն դարձյալ ցուցաբերել է կայուն աճ՝ գերազանցելով 2008 թ. մակարդակը: Ճգնաժամի տարիներին՝ հատկապես 2009 թ., իրական ՀՆԱ աճը կտրուկ նվազել է նախորդ բոլոր տարիների կայուն աճի համեմատությամբ: Հարկ է նշել, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո թեև տնտեսական աճի տեմպերը նվազել են մինչճգնաժամային աճի տեմպերի համեմատությամբ, այնուամենայնիվ, երկրի տնտեսական աճի կառուցվածքում տեղի են ունեցել որակական տեղաշարժեր: Երկրի տնտեսությունը 2010 թ. սկսեց վերականգնվել՝ ապահովելով ՀՆԱ փոքր աճ, որը շարունակվեց նաև 2011 թ., երբ նախորդ տարվա համեմատությամբ տնտեսական աճը կազմեց 4.7%: Այս առումով, դրական անդրադարձ ունեցան հատկապես Կառավարության հակաճգնաժամային միջոցառումները, արտաքին բարենպաստ միջավայրը, ինչպես նաև 2011 թ. գյուղատնտեսության ոլորտում ձեռնարկված քայլերը՝ ուղղված տարբեր ծրագրերով գյուղմթերքների արտադրության և արտահանման խթանմանը:

Դրան զուգահեռ, նվազել է մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն: Այսպես՝ եթե 2008 թ. մեկ շնչի հաշվով երկրում արտադրվել է 1103.3 հազ. դրամի ՀՆԱ, ապա 2009 թ. այս ցուցանիշը կրճատվել է 12.2%-ով՝ կազմելով 968.5 հազ. դրամ: 2010 թ. մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն գերազանցել է 2009 թ. մակարդակը, իսկ 2011 թ.՝ 2008 թ. մակարդակը՝ կազմելով 1155.4 հազ. դրամ: Այս ցուցանիշը տնտեսության կայուն աճի պայմաններում՝ նախաճգնաժամային տարիներին (մինչև 2008 թ. ներառյալ) աճել է:

2008 թ., նախորդ տարվա համեմատությամբ, զգալի փոփոխություններ կրեցին ինչպես արդյունաբերական, այնպես էլ սպառողական ապրանքների գները. ՀՆԱ դեֆլատորը 104.2%-ից հասավ 105.9%-ի, իսկ ՍԳԻ-ն՝ 109.0%-ի: Ինֆլացիան նվազեց 2009 թ.: Նույն թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, ինչպես ՀՆԱ դեֆլատորը, այնպես էլ ՍԳԻ-ն կրճատվեցին, իսկ 2010-2011 թթ. նորից աճեցին: 2011 թ. սկիզբը բնութագրվում էր բարձր գնաճային միջավայրով, որի պատճառներն էին 2010 թ. ընթացքում միջազգային շուկաներում հումքային և պարենային ապրանքների գների աճը, ՀՀ գյուղատնտեսության ճյուղի խոր անկման պայմաններում առաջարկի կրճատումը: Ընդ որում, 2011 թ. մարտի վերջին գրանցվեց գնաճի ամենաբարձր մակարդակը՝ 11.5%: Հաջորդ ամիսներին այդ միտումը նվազեց. 12-ամսյա գնաճը կազմեց 4.7%: Դա հիմնականում պայմանավորված էր տարեսկզբից դրամավարկային պայմանների խստացմամբ, արտաքին շուկաներում պարենային և հումքային ապրանքների գների որոշակի կայունացմամբ, իրականացված հարկաբյուջետային զսպող քաղաքականության ազդեցությամբ և նախորդ տարվա համեմատությամբ տեղական արտադրության գյուղմթերքների գների նվազմամբ: 2012 թ. առաջին ութ ամիսների ընթացքում գնաճը դրսևորել է նվազողական վարքագիծ, որի արդյունքում օգոստոսի վերջին 12-ամսյա գնաճը կազմել է 2.5%, իսկ 2012 թ.՝ 4.7%: Դրա պատճառը բացառապես պարենային ապրանքների գների անկումն է, այն դեպքում, երբ ոչ պարենային գները և ծառայությունների սակագները հիմնականում աճել են:

Աղյուսակ 5-ի տվյալներից երևում է, որ 2011 թ. գործազրկության մակարդակը զգալիորեն բարձր է նախորդ բոլոր տարիների համար հաշվարկված ցուցանիշներից: Եթե մինչև 2010 թ. գործազրկության մակարդակը հաշ-

վարկվում էր գործազուրկների թվի և աշխատանքային ռեսուրսների հարաբերությամբ, ապա 2011 թ. այդ ցուցանիշը որոշվել է նոր մեթոդաբանությամբ՝ գործազուրկների և միայն տնտեսապես ակտիվ բնակչության թվերի հարաբերությամբ: Բանն այն է, որ համեմատության բազան փոխվել է: Տնտեսապես ակտիվ բնակչության թիվն ավելի փոքր է, քան աշխատանքային ռեսուրսների քանակը: Այսպես՝ գործազրկության պաշտոնական մակարդակը (2002-ից մինչև 2010 թ. ներառյալ) աղյուսակ 5-ում հաշվարկված է հին մեթոդաբանությամբ, այսինքն՝ ըստ աշխատանքային ռեսուրսների, 2009, 2010 և 2011 թթ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 7.0, 7.0 և 11.6%: Նոր մեթոդաբանությամբ վերահաշվարկված՝ գործազրկությունն այդ թվականներին կազմել է համապատասխանաբար՝ 18.7, 19.0, 18.4%: Տնտեսական աճի հաշվարկները թույլ են տալիս ենթադրել, որ գործազրկության մակարդակը կորսնորի աստիճանական, համեստ տեմպերով նվազման միտում, քանի որ կուղեկցվի աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ: Գործազրկության մակարդակի նվազումը կապահովվի տնտեսության ճյուղերում նոր աշխատուժ ներգրավմամբ:

Ֆինանսատնտեսական ճգնաժամն էականորեն կրճատեց նաև համախառն խնայողությունները: 2002 թ. մինչև 2008 թ. դրանք անընդհատ աճել են, սակայն 2009 թ. կտրուկ կրճատվել՝ նախորդ տարվա 1141.7 մլրդ դրամից դառնալով 553.9 մլրդ դրամ, իսկ 2010 թ. կրկին նվազել են՝ կազմելով 507.5 մլրդ դրամ: Նման տեմպերով խնայողությունների կրճատումը նույնպես վկայում է ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության մասին, որը բացասաբար է ներգործում ներդրումների ավելացման վրա:

Ֆինանսատնտեսական ճգնաժամն էականորեն անդրադարձավ նաև տնտեսության իրական հատվածի զարգացման վրա (աղյուսակ 6): Աղյուսակի տվյալներից երևում է, որ իրական հատվածի տնտեսական անկում հիմնականում գրանցվել է 2009 թ.: Այսպես՝ արդյունաբերությունը խոր անկում ապրեց 2009 թ. սկզբին, սակայն նույն տարվա 2-րդ կեսից, միջազգային շուկայում մետաղների գների աճի և Կառավարության համակարգված հակաարբերաշրջանային քաղաքականության արդյունքում, արդյունաբերությունն աստիճանաբար վերականգնվեց: Այդ միտումը 2010 թ. արագացավ, 2011 թ. պահպանվեց, և ճյուղում արձանագրվեց ավելացված արժեքի 13.5% իրական աճ: 2012 թ. հունվար-հուլիս ամիսներին ապահովվել է արդյունաբերական արտադրանքի 13.4% աճ¹⁸: Այդ ցուցանիշը գրանցվել է հանքագործական արդյունաբերության, մշակող արդյունաբերության, ջրամատակարարման, գազի, էլեկտրաէներգիայի ենթաճյուղերի թողարկումների ավելացման հաշվին: Հանքագործական արդյունաբերության աճը պայմանավորված է ճյուղի մրցունակության մակարդակի բարձրացմամբ: Մշակող արդյունաբերության աճին նպաստել են խմիչքի, սննդամթերքի, հիմնային մետաղների արտադրությունները, ինչպես նաև ոչ մետաղական հանքային և ծխախոտի արտադրատեսակների արտադրությունների աճը: Սննդամթերքի արտադրության աճը պայմանավորված է ինչպես հասարակության տնօրինվող եկամտի, այնպես էլ արտահանման ծավալների աճով:

¹⁸ Տե՛ս www.parliament.am/draft_docs5/K-104arajark/1.3.Uxerc.Mas.2a-1.pdf, ՀՀ տնտեսական և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների կանխատեսումներ, II մաս, էջ 55:

Աղյուսակ 6

ՀՀ ՀՆԱ կառուցվածքի փոփոխությունները ֆինանսատնտեսական ճգնաժամից առաջ և հետո՝ ըստ տնտեսության հիմնական ճյուղերի¹⁹

Ցուցանիշներ	Տ ա ր ի ն ե ռ									
	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Տնտեսության իրական հատվածի հիմնական ոլորտներ										
Արդյունաբերություն (մլրդ դրամ)	341,1	426,1	535,3	651,9	644,9	716,5	739,3	669,4	824,4	999,0
Տեսակարար կշիռ ՀՆԱ-ում (%)	32.1	32.7	33.4	33.5	27.5	27.3	25.0	26.4	29.1	31.6
Գյուղատնտեսություն (մլրդ դրամ)	377,6	410,1	504,1	493,0	555,9	633,9	628,1	552,1	636,7	795,0
Տեսակարար կշիռ ՀՆԱ-ում (%)	35.5	31.4	31.5	25.4	23.7	24.2	21.2	21.8	22.4	25.1
Շինարարություն (մլրդ դրամ)	166,6	237,8	276,4	435,1	643,8	671,0	858,7	579,7	588,8	504,8
Տեսակարար կշիռ ՀՆԱ-ում (%)	15.7	18.2	17.2	22.4	27.5	25.6	29.1	22.9	20.7	16.0
Ծառայություններ (մլրդ դրամ)	177,7	230,4	287,7	362,8	498,5	571,8	698,5	737,6	791,2	865,6
Տեսակարար կշիռ ՀՆԱ-ում (%)	16.7	17.7	17.9	18.7	21.3	22.9	24.7	28.9	27.8	27.3
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	1362,5	1624,6	1907,9	2242,9	2656,2	3149,3	3568,2	3141,7	3460,2	3776,4
Տեսակարար կշիռ (%)	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Էլեկտրաէներգիայի արտադրության աճն ապահովվել է ՋԷԿ-ի արտադրությամբ: Ակնկալվում է, որ նշված դրական միտումները կշարունակվեն նաև 2013 թ., և կապահովվի ավելացված արժեքի շուրջ 9.2% աճ²⁰:

2010 թ. գյուղատնտեսությունը խոր անկում ապրեց գերազանցապես բուսաբուծության համար անբարենպաստ կլիմայական պայմանների պատճառով: 2011 թ. ճյուղը սկսեց վերականգնվել, և բարենպաստ կլիմայական պայմանների ու ՀՀ Կառավարության ձեռնարկած արդյունավետ միջոցառումների շնորհիվ գյուղատնտեսությունն, իրական արտադրությամբ, աճեց 13.6%-ով: 2012 թ. հունվար-հուլիսին գյուղատնտեսության համախառն արտադրանքն, իրական արտադրությամբ, ավելացել է 10.4%-ով, դրան նպաստել է բուսաբուծության 23.4%-ով աճը²¹, անասնաբուծության 2.1% իրական աճը²²: ԱՎԾ հաշվարկները ցույց են տալիս, որ նշված միտումների

¹⁹ Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2007, Եր., 2007, էջ 238, 274, 294, 340, Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2010, Եր., 2010, էջ 363, Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2012, Եր., 2012, էջ 16, 253, 291, 310:

²⁰ Տե՛ս www.parliament.am/draft_docs5/K-104arajark/1.3.Uxerc.Mas.2a-1.pdf, ՀՀ տնտեսական և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների կանխատեսումներ, II մաս, էջ 55:

²¹ Տե՛ս նույն տեղը:

²² Տե՛ս նույն տեղը:

շարունակականության դեպքում գյուղատնտեսության աճը 2013 թ. կկազմի 4.5%:

Աղյուսակ 6-ից երևում է, որ 2009 թ. մեծ անկում ապրեց նաև շինարարությունը, որը մինչև այժմ չի վերականգնվել, թեև 2010 թ. արձանագրվեց փոքր աճ: Այնուամենայնիվ, 2011 թ. շինարարության ծավալները, նախորդ տարվա համեմատությամբ, 11.5%-ով կրճատվեցին: Դրա պատճառը բնակչության և կազմակերպությունների միջոցների ֆինանսավորմամբ իրականացվող շինարարության ծավալների կրճատումն էր: Ըստ ֆինանսների նախարարության՝ 2012 թ. հունվար-հուլիս ամիսների վերլուծության, ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալներն, իրական արտահայտությամբ, նվազել են 5.2%-ով: Հարկ է նշել, որ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, 2012 թ. նվազել են մարդասիրական օգնության և կազմակերպությունների, ինչպես նաև պետական բյուջեի հաշվին իրականացվող շինարարության ծավալները: Մինչդեռ, բնակչության, համայնքների և միջազգային վարկերի միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալներն ավելացել են: ՀՀ ֆինանսների նախարարության հաշվարկներով շինարարության ոլորտում 2013 թ. կանխատեսվում է 3.5% աճ: Ի տարբերություն մյուս ճյուղերի՝ ծառայությունների ոլորտի անկումն աննշան էր՝ 3.3%, որը 2010 թվականից սկսեց վերականգնվել: Աճի միտումները շարունակվեցին նաև 2011 թ.՝ արձանագրելով 5% իրական աճ: Դա պայմանավորված էր հիմնականում ֆինանսական միջնորդության, առևտրի և կրթության ենթաճյուղերի աճով: Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության՝ 2012 թ. հունվար-հուլիս ամիսների վերլուծության, ծառայությունների ոլորտը դարձավ տնտեսական աճ ապահովող հիմնական շարժիչ ուժերից մեկը: Այդ ժամանակամիջոցում ծառայությունների ծավալի՝ իրական արտահայտությամբ աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 11.0%, որին նպաստել է ֆինանսական և ապահովագրական գործառնությունների թվի աճը: 2013 թ. կանխատեսվում է ծառայությունների իրական աճ՝ 6.2%՝ պայմանավորված տնտեսության մյուս ճյուղերի համահունչ զարգացմամբ:

Ֆինանսատնտեսական ձգնաժամի տարիներին էական փոփոխության ենթարկվեց նաև ՀՆԱ օգտագործումը: Հատկանշական է, որ 2002-2011 թթ. վերջնական սպառման, այդ թվում՝ մասնավոր և պետական սպառման ծախսերն անընդհատ ավելացել են (աղյուսակ 7): Եթե 2002-2008 թթ. նախաձգնաժամային տարիներին վերջնական սպառումն աճել է բարձր տեմպերով, ապա 2009 թվականից տեմպերը դանդաղել են, սակայն չեն նվազել: Մասնավոր սպառումը 2009 թ., 2008 թ. համեմատությամբ, փոքր-ինչ կրճատվել է, բայց 2010-2011 թթ. ավելացել է և նույնիսկ գերազանցել նախաձգնաժամային՝ 2008 թ. մակարդակը: Ի տարբերություն վերջնական և մասնավոր սպառման ծախսերի, պետական սպառման ծախսերը 2009 թ., 2008 թ. համեմատությամբ, ավելացել են 14.8%-ով, որը պահպանվել է նաև 2010-2011 թթ.: Էական փոփոխություններ են կրել վերջնական սպառում/ՀՆԱ, մասնավոր սպառում/ՀՆԱ հարաբերակցությունները: Ի դեպ, ձգնաժամային 2009 թ., նախորդ տարվա համեմատությամբ, այդ ցուցանիշները մեծացել են՝ շարունակելով աճել նաև 2011 թ.: Փոփոխությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ ձգնաժամից դուրս գալու կարևոր միջոցներից մեկը Կառավարությունը համարում էր պահանջարկի խթանումը: Հետևապես՝ տնտեսա-

կան բարեփոխումները նպատակաուղղված էին տնտեսական աճի կայունացմանը, որը սակայն հանգեցրեց ներդրումների կրճատմանը:

Աղյուսակ 7

ՀՆԱ օգտագործման շարժունքացի²³

Ցուցանիշներ	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	1362,5	1624,6	1907,9	2242,9	2656,2	3149,3	3568,2	3141,7	3460,2	3776,4
Վերջնական սպառման ծախսեր (մլրդ դրամ)	1349,8	1518,9	1767,7	1930,0	2187,1	2576,2	2918,8	2944,0	3289,6	3648,6
այդ թվում՝										
Մասնավոր սպառում (մլրդ դրամ)	1213,7	1352,1	1573,6	1693,3	1919,1	2253,8	2553,7	2525,0	2837,3	3134,4
Պետական սպառում (մլրդ դրամ)	136,1	165,8	194,1	236,7	268,0	320,4	365,0	419,0	452,3	517,4
Սպառում/ՀՆԱ (%)	99.1	93.5	92.6	86.0	82.3	81.8	81.8	93.7	95.0	96.6
Մասնավոր սպառում/ՀՆԱ (%)	89.1	83.3	82.5	75.5	72.3	71.6	71.6	80.4	82.0	83.0
Պետական սպառում/ՀՆԱ (%)	10.0	10.2	10.2	10.6	10.1	10.2	10.2	13.3	13.0	13.7
Ներդրումներ (մլրդ դրամ)	295,2	394,1	474,7	683,3	953,7	1189,9	1458,4	1089,2	1137,3	1053,9
Ներդրումներ/ՀՆԱ (%)	21.7	24.3	24.9	30.5	35.9	37.8	40.9	34.7	32.8	27.9
Ապրանքների և ծառայությունների զուտ արտահանում (մլրդ դրամ)	-234,8	-290,5	-281,3	-323,4	-422,1	-628,8	-913,8	-864,9	-847,3	1047,1

Աղյուսակ 7-ի տվյալները վկայում են, որ 2009 թ., 2008 թ. համեմատությամբ, ներդրումները կրճատվեցին 25.3%-ով, իսկ ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը 2008 թ. 40.9%-ից 2009 թ. դարձավ 34.7% և շարունակեց կրճատվել՝ 2011 թ. հասնելով 27.9%-ի:

Ներդրումների նման ցուցանիշները պայմանավորված էին նաև արտաքին ազդեցություններով: 2009 թ. վերջնական սպառումը, իրական արտահայտությամբ, կրճատվել է ընդամենը 4%-ով՝ 14.1% տնտեսական անկման պայմաններում, որի հիմքում հարստության էֆեկտն է, այսինքն՝ նախորդ տարիներին կուտակած խնայողությունները: 2010 թ. սկսած՝ վերջնական սպառումը սկսել է աճել՝ գերազանցելով տնօրինվող եկամտի իրական աճը: 2011 թ. վերջնական սպառումն ավելացել է 3.4%-ով և գերազանցել տնօրինվող եկամտի իրական աճը (5.5%): Փաստորեն, խնայողություններն աճել են, որը կարևոր ներուժ է ապագա ներդրումների համար: 2012 թ. առաջին վեց ամիսներին վերջնական սպառումն աճել է 5.6%-ով²⁴: Դրան նպաստել են

²³ Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2007, Եր., 2007, էջ 225, Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2012, Եր., 2012, էջ 243:

²⁴ Ներկայացված ցուցանիշը ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականն է. www.parliament.am/draft_docs5/K-104arajark/1.3.Uxerc.Mas.2a-1.pdf, ՀՀ տնտեսական և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների կանխատեսումներ, II մաս, էջ 60:

մասնավոր սպառման 6.8%-ով աճը և պետական սպառման 2.4%-ով նվազումը: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները համապատասխանաբար կազմել են 13.1 և 86.9%:

Մասնավոր ներդրումների կրճատման պատճառով 2009 թ., նախորդ տարվա համեմատությամբ, իրական կապիտալ ներդրումները կրճատվել են շուրջ 30.9%-ով: Պետական կապիտալ ներդրումները նույն ժամանակահատվածում աճել են 11.5%-ով, որը պայմանավորված է Կառավարության խթանող քաղաքականությամբ: Իրական կապիտալ ներդրումները 2010 թ. աճել են աննշան չափով, սակայն 2011 թ. նվազել են 4.7%-ով: Դա վերաբերում է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածի ներդրումներին: 2012 թ. առաջին վեց ամիսներին կապիտալ ներդրումները կրճատվել են շուրջ 4.6%-ով, որը հիմնականում պետական ներդրումների կրճատման հետևանք է: Դրան հակառակ, մասնավոր ներդրումներն ավելացել են շինարարության ոլորտում կատարվող ներդրումների ավելացման հաշվին:

Այսպիսով՝ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վերլուծությունից պարզվեց, որ ֆինանսատնտեսական ճգնաժամը Հայաստանի տնտեսության վրա ամենախոր ազդեցությունն ունեցել է 2009 թ., ընդ որում, դա բոլոր ոլորտների վրա հավասարաչափ չի եղել: Ամենամեծ ազդեցությունը կրել է կապիտալ շինարարությունը, որը մինչև օրս դեռ չի հասել նախաճգնաժամային վերջին տարվա մակարդակին: Սա ցայտուն կերպով երևում է նաև ՀՆԱ կառուցվածքային փոփոխություններից: Եթե շինարարության ճյուղի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2008 թ. կազմել է 29.1%, ապա 2011 թ.՝ 16.0%: ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի նման փոփոխությունները բացասաբար անդրադարձան նաև երկրի տնտեսության միկրոմակարդակի վրա:

Nîêñêàòǎëü êà ôǎǎđû „ ì àèđîýéîíîìèèè” ÀÃÝÓ

***Ìàèðíyéíííì-àñéày ñèòóàòèy yéíííìèè ÐÀ à àí-
èðèçèñííúè è ííñòèðèçèñííúè Ìàðèíàù.-*** Á ñòàòùà àíàèèç-
òóòòñy àèèyíèà òèíàíñíàíàí èðèçèñà ìà àíðííàíáùàà-
ùòòp òðííùðèáíííñòù, ìàèðíyéíííì-àñéèà ííèàçàòáèè è
ðáàèùíúè ñàèòòð yéíííìèè, ííèñùàày ñèòóàòèp àí è ííñ-
èà èðèçèñà. Áíàèèç ííèàçàè, ÷òí à Àðíáíèè èðèçèñ à Ìàð-
áòòp ì-àòóàù ííàèèyè ìà àíðííàíáùààùòòp òðííùðèáí-
ííñòù, ÷òí Ìèèàáè è ñíèðàùáíèp òðííùðèáíííàí òðíèç-
àíàñòàà è íáúàìà òðíààæ, à òàèæà àíñòààðñòóàáíúð àíðí-
àíà. Áíàèèç ìàèðíyéíííì-àñéíé ñèòóàòèè ííèàçàè, ÷òí
àèèyíèà yéíííì-àñéíàí èðèçèñà áúèí ñàìùì àèóáíèè à
2009 àíàó, èíààà ñíàà àñàò yéíííì-àñéèò ííèàçàòáèè
áúè ñàìùì àùñíèè. Íàíàèí yòòò yò óàèò ìà áúè ðááíí-
ìàðíùì àí àñàò ñàèòòðàò. Áíèùðà àñàò ííñòðàààèí èàíè-
òàèùííà ñòðíèòàèùñòàí, èíòòðíà àí ñèò òð áùà ìà àíñ-
òèàèí àíèðèçèñííàí óðíáíy.

Researcher at the Chair of „Macroeconomics” at ASUE

The Macroeconomic Situation of the Economy in the RA During Antecrisis and Postcrisis Periods.- The article examines the impact of the financial crisis on the mining industry, macroeconomic indicators and the real economy, describing the situation before and after the crisis. The analysis showed that in Armenia the crisis primarily affected the mining industry, which led to a reduction in industrial production and sales volumes, as well as government revenues. Macroeconomic analysis showed that the impact of the economic crisis was the deepest in 2009, when the decline of all economic indicators was the highest. However, this effect was not even for all sectors. The sector of capital construction suffered most of all and it has not reached the antecrisis level yet.

